ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՎԱ-ԱԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/18» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացնում եմ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) (ՀՎՀՀ 01052798) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

«ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից կազմակերպված՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/18» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին:

«ՎԱ-ԱԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/18» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 03.11.2023թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության (հավելված 1) մեջ սխալ է գրված պատվիրատուի անվանումը, գնման ընթացակարգի ծածկագիրը, մասնակցած չափաբաժինների համարները, բացակայում է թվային էլեկտրոնային ստորագրությունը, իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող կայքէջի հղումը (հավելված 1.3), ինչպես նաև գնային առաջարկով հանդես եկած չափաբաժինների (3-րդ, 4-րդ, 9-րդ և 11-րդ) ապրանքների ամբողջական նկարագիրը՝ ներառյալ ապրանքային նշանը, մակնիշը, արտադրող երկիրը և տեխնիկական բնութագրերը:

Ս.թ. նոյեմբերի 7-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ, Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի «Գնումների գործընթացի կազմակերպման» մասին թիվ 526-Ն որոշման 41-րդ կետը, կասեցվել էր նիստը և ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից https://eauction.armeps.am/ էլեկտրոնային համակարգի միջոցով մասնակցին էր ուղարկվել անհամապատասխանության շտկման վերաբերյալ ծանուցումը: «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել շտկված փաստաթղթերը, հետևաբար հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշեց մերժել «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի համաձայն:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշեց նախաձեռնել գործընթաց՝ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ համաձայն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի «ա» պարբերության (խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է 3-րդ, 4-րդ, 9-րդ և 11-րդ չափաբաժինների մասով գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը):

Միաժամանակ, 07.11.2023թ. www.gnumner.am կայքում պատվիրատուն հրապարակել է 3-րդ, 4-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ (...), ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, (...):

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը (...), ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում***:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքները՝ Պատվիրատուն արձանագրում է, որ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ն՝ կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում իր կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելով՝ խախտել է ***գնման գործընթացի շրջանակում իր կողմից ստանձնված պարտավորությունը,*** ինչը հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ